

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մարտի 2-ին ժամը 17: 28-ին Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 40 հասցեում տեղի ունեցավ Փարաքար համայնքի ավագանու արտահերթ նիստը, որին մասնակցում է Փարաքար համայնքի ավագանու 21 անդամներից 11-ը, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը: Փարաքար համայնքի ավագանու արտահերթ նիստը վարում է համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը: Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար Գայանե Մանուկյանը:

Նախագահողը՝ համայնքի ղեկավարը ավագանու անդամներին ներկայացրեց 2023 թվականի առաջին նստաշրջանի առաջին արտահերթ նիստի օրակարգի հարցերը՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին

Զեկ.՝ Ք.Մելքոնյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման հաստատման մասին

Զեկ.՝ Ք.Մելքոնյան

3. Սարգիս Խաչիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկ.՝ Հ.Միքայելյան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Օրակարգի 1-ին հարցը - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց աշխատակազմի ՖԳԵՀ և Հ բաժնի պետ Քնարիկ Մելքոնյանը, նա նշեց, որ ավագանու անդամների հետ տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ կապված բյուջեի հաստատման հետ, բոլոր հավելվածները՝ հատվածները տեղադրված են եղել կայքում, տրամադրվել են ավագանու անդամներին, ինչպես նաև ուղարկվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարություն փորձաքննության համար, որտեղից ստացվել է դրական եզրակացություն, ներկայացրեց որոշման նախագիծը:

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 90-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2023 թվականի փետրվարի 21-ի թիվ 06/27.0.01/8506-23 պետական փորձագիտական եզրակացությունը, առաջարկվում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն NN 1-10-րդ հավելվածների :

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելուն:

2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման փոփոխություններ կատարելու համար 50 տոկոսի չափաքանակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողին հարցեր չեղան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման հաստատման մասին, որոշման նախագիծը ներկայացրեց աշխատակազմի ՖԳԵՀ և Հ Բաժնի պետ Քնարիկ Մելքոնյանը, նշեց որ

ղեկավարվել են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասով, առաջարկվում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի: Բյուջեի կատարման հաղորդումը տրամադրված է եղել ավագանու անդամներին, տեղեղրված է եղել համայնքի պաշտոնական կայք էջում

Զեկուցողին հարցեր չեղան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ Սարգիս Խաչիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Միքաելյանը, նշեց, որ ղեկավարվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով, հիմք է ընդունվել Սարգիս Խաչիկի Ղազարյանի 2023 թվականի փետրվարի 9-ի N 429 դիմումը և Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի

փետրվարի 21-ին տրված N 33 ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը.
առաջարկում է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող, Սարգիս Խաչիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-094-0562-0031 կադաստրային ծածկագրով 0,1622 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության / հողատեսքը՝ 0.1622 հա հողամասից՝ 0.0762 հա հանդիսանում է խաղող, 0.086 հա վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում տնտեսական շինություն և սնկանոց կառուցելու համար:

2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո ավագանու նիստը հայտարարվեց փակված:

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՅՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Արձանագրող՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

